ՀԱԱՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/54-2

21-ը նոյեմբերի 2019թ.

ք. Երևան

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Վ. Ուռուտյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ֆոտոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Պետրոսյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1081804 (մեկ միլիոն ութսունմեկ հազար ութ հարյուր չորս) << դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է << դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ք. Երևան,Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010053103
ՀՎՀՀ՝ 01507028
Ռեկտոր՝

Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Ֆոտոն» ՍՊԸ
ք. Երևան, Ռոստոմի 58
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16044050085000
ՀՎՀՀ՝ 90036001

Տնօրեն՝

Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված N 1
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/54-2 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի							Մատակարարման*		
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Միավոր գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	Գումար (ՀՀ դրամ)	Հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
4	15821400	Չորահաց	Չորահաց ապխտած մսի համով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 %:	կգ	1500	5	7500	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
5	03142100	Մեղր	Բնական մեղր՝ ծաղկային կամ մեղրացողային, առանց մեխանիկական խառնուրդների և խմորման, ջրի զանգվածային բաժինը՝ 18,5 %-ից ոչ ավելի, սախարոզի զանգվածային մասը (ըստ բացարձակ չոր նյութի)՝ 5,5%-ից ոչ ավելի, ՀՍ 228-2003, փաթեթավորումը՝ ՀՍ 228-2003: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 %:	կգ	2888	20	57760	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
6	15831000	Շաքարավազ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում այնպես էլ լուծույթով): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց լուծված և կողմնակի խառնուրդների, սախարոզի զանգվածային մասը՝ 99.75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված):	կգ	294	30	8820	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
7	15542100	Կաթնաշոռ	Կաթնաշոռ 18 և 9,0% յուղի պարունակությամբ, թթվայնությունը՝ 210-240 0 Т, փաթեթավորված սպառողական տարաներով, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %:	կգ	1790	20	35800	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
8	15512000	Թթվասեր	Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0Т, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ	կգ	1090	45	49050	ՀՀ,	45	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

			կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %:					Կոտայք, գ. Աղավնաձոր		նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
9	03142510	Ձու	Ձու սեղանի, I կարգի տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, սեղանի ձվի պահպանման ժամկետը 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր, փաթեթավորված ծալքավոր ստվարաթղթե բջիջներով. Անվտանգությունը՝ Սան Պին 2.3.2.560-96. OUS182-99	հատ	58	600	34800	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	600	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
10	15421100	Ձեթ	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված, ԳOUS 1129-93: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության ժամկետը մատակարարման պահին առնվազն 6 ամիս:	լիտր	568	25	14200	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	25	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
12	15111110	Միս տավարի	Միս տավարի տեղական, սպանդանոցային ծագման, պաղեցրած, փափուկ միս զարգացած մկաններով, պահված 0ºC -ից մինչև 4ºC ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար30% և 70%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	2988	80	239040	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	80	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
13	15331161	Սոխ գլուխ	Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳOUS 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	280	20	5600	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը

14	03221110	Գազար	Բոստանային, էկոլոգիապես մաքուր, թարմ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	298	20	5960	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
16	15331139	Լոլիկ	Թարմ բոստանային, էկոլոգիապես մաքուր: Տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1190	40	47600	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	40	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
17	03221124	Վարունգ	Թարմ բոստանային, էկոլոգիապես մաքուր: Երկարությունը 8 սմ-ից ոչ պակաս, ամբողջական, առողջ, առանց մեխանիկական վնասվածքների Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1190	30	35700	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
19	03221410	Կաղամբ	Գլուխ կաղամբ վաղահաս, միջահաս և ուշահաս տեսակների: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկած: Գլուխները մաքրված լինեն մինչև կանաչ և սպիտակ տերևների խիտ մակերեսը: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Մաքրված գլուխների քաշը ոչ պակաս 0.7կգ: ԳOUS2676885: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	140	70	9800	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	70	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
21	15617000	Ցորենաձավար	Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, «Հացահատիկին, դրարտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	290	10	2900	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը

23	15851100	Մակարոն	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված այլուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի այլուրից, ԳՕՍՏ 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	290	15	4350	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
26	03221120	Բիբար կանաչ	Կանաչ բիբար, թարմ, մինչև 16 սմ երկարության, 4 սմ լայնությամբ, կոնաձև, սովորաբար կարճ պտղակոթով: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1350	10	13500	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
27	15113100	Միս խոզի	Պաղեցրած վիճակում, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 50-50%, մսեղիք: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	2700	60	162000	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	60	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
28	15112150	Միս հավի	Հավի միս տեղական, պաղեցրած առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, ԳՕՍՏ 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	1394	60	83640	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	60	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
30	15131600	Նրբերշիկ	Բաղադրությունը՝ հավ, ջուր, ցորենի այլուր, մոդիֆիկացված եգիպտացորենի օսլա, հավի ճարպ, աղ, համեմունքներ, եգիպտացորենի օշարակ, սոյայի սպիտակուց, սոխի, սխտորի փոշի, նատրիումի ֆոսֆատ, խոզի ծխեցրած փափկամիս: Վակուումային փաթեթավորմամբ: Կանադական արտադրության կամ համարժեքը: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %:	կգ	1440	25	36000	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	25	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
31	15511200	Կաթ	Պաստերացված կովի կաթ 3% յուղայնությամբ, տեղական արտադրության, թթվայնությունը՝ 16-21ՕT, ԳՕՍՏ-13277-79: Անվատանգությունը և մակնշումը՝ N-2-111-4.9-01-2003 (ՈԴ Սան Պին 2.3.2-1076-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային	լիտր	390	40	15600	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	40	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ

			ժամկետը ոչ պակաս քան 90 %:							ուշ քան դեկտեմբերի 25ը
32	15623200	Սպիտակաձավար	Պատրաստված կոշտ և փափուկ ցորենից, ԳՕՍՏ 7022-97: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III- 4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	324	10	3240	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
36	15331153	Ոսպ	Համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0)% ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 6 ամիս:	կգ	400	10	4000	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
39	15331180	Ոլոռ կանաչ	Պահածոյացված, կանաչ գույնի, հատիկները կանաչ աղիությունը՝ միջին, 0,5-1 կգ-անոց տարաներով: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 6 ամիս:	կգ	870	10	8700	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
40	15871256	Աղացած սև պղպեղ	Համեմունք աղացած, ընտիր տեսակի: ԳՕՍՏ 29050-91: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	4790	2	9580	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
41	15871256	Աղացած կարմիր պղպեղ	Համեմունք աղացած, ընտիր տեսակի: ԳՕՍՏ 29053-91: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	2500	2	5000	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը

43	15331184	Ձիթապտուղ սև	Ձիթապտուղ սև, միջին չափսի, կորիզով:Գործարանային թիթեղյա 3կգ-ոց տարրաներով պահածոյացված: Պիտանելիության ժամկետը մատակարարման պահին առնվազն 6 ամիս:	կգ	1698	18	30564	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	18	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
44	15331176	Պահածոյացված սունկ	Պահածոյացված, հատիկները ամբողջական աղիությունը՝ միջին, 1 կգ-անոց տարաներով: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին »ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 6 ամիս:	կգ	1190	15	17850	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
53	15981200	Հանքային ջուր	Խմելու բուժիչ սեղանի ջուր,հիդրոկարբոնատային, նատրումական, սիլիկատային բորային գազավորված,փաթեթավորումը 1 լիտրանոց պոլիմերյան տարաներում: ՀՍ191 - 2000: Պահպանման ժամկետը մեկ տարի:	լիտր	240	50	12000	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	50	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
54	15981500	Գազավորված զովացուցիչ ըմպելիք	Գազավորված զովացուցիչ ըմպելիք՝ տանձի, թարխունի,կոլայի,նարինջի համով, 1լիտր տարողությամբ: Բաղադրությունը՝ խմելու աղբյուրի ջուր, բնական համբուրավետիչ կիտրոնաթթու, նատրիումի բենզոատ, ածխածնի երկօքսիդ:	Լիտր	215	60	12900	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
56	15332300	Պնդուկ	Պնդուկի միջուկ, միջին չափսի, ամբողջական, առանց վնասվածքների զերծ կողմնակի մարմիններից: Պիտանելիության ժամկետը մատակարարման պահին առնվազն 3ամիս:	կգ	3900	3	11700	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
58	03111110	Գետնանուշ	Գետնանուշ չբովված, կեղևով,ամբողջական հատիկներով ,միջին չափի ,թարմ, զերծ կողմնակի մարմիններից; Պիտանելիության ժամկետը մատակարարման պահին առնվազն 3ամիս:	կգ	1450	3	4350	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ

										ուշ քան դեկտեմբերի 25ը
60	15332300	Ընկույզ կոտրած	Ընկույզի միջուկ, միջին չափսի, սպիտակ ամբողջական,առանց վնասվածքների զերծ կողմնակի մարմիններից; Պիտանելիության ժամկետը մատակարարման պահին առնվազն 3ամիս:	կգ	7000	2	14000	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
62	15861100	Սուրճ	Բնական սուրճ՝ աղացած, 1-ին տեսակի, ԳՕՍՏ 6805-97 մինչև 0.5 կգ-ոց պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մինչև 1 կգ ստվարաթղթե արկղերով, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70%: Պիտանելիության ժամկետը մատակարարման պահին առնվազն 3ամիս:	կգ	2200	2	4400	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
65	15131122	Երշիկ	Երշիկ կիսապխտած՝ պատրաստված տավարի և խոզի մսերից, ըստ ԳՕՍՏ 16351-86 կամ արտադրողի տեխնիկական պայմանների, խոնավությունը ոչ ավելի քան 45%, փաթեթավորած վակուումային կամ առանց, յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 60 օր: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	2400	3	7200	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
71	03222119	Նարինջ	Նարինջ թարմ, պտղաբանական II խմբի (71-ից փոքր մինչև 63մմ ներառյալ), ԳՕՍՏ 4427-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	700	25	17500	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	25	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
74	03222118	Կիտրոն	կիտրոն թարմ, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների ԳՕՍՏ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և	կգ	1200	6	7200	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	6	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի

			«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:							պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը
75	15131650	Քյուֆթա	Քյուֆթա, պատրաստված բարձորակ թարմ տավարի մսից: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Գործարանային արտադրության 1 կգ ոչ պակաս տարաներով:պահպանման ժամկետը առաքման պահին նվազագույնը 96 ժամ:	կգ	2800	15	42000	ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր	15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից նվազագույնը 20 օրացույցային օր հետո,ըստ պատվիրատուի պահանջի ,բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25ը

Ծանոթություն.*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

Պատվերը կատարել պահանջը առաջանալուց 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ք. Երևան,Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 247010053103
ՀՎՀՀ՝ 01507028
Ռեկտոր՝

Վ. ՈՒՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ֆոտոն» ՍՊԸ
ք. Երևան, Ռոստոմի 58
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 16044050085000
ՀՎՀՀ՝ 90036001

Տնօրեն՝

Ս. ՊՍՏՐՈՅԱՆ

Հավելված N 2

ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/54-2 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Միավոր գինը (ՀՀ դրամ)	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.՝ ըստ ամիսների, այդ թվում*			
						X	XI	XII	Գումար (ՀՀ դրամ)
4	15821400	Չորահաց	կգ	5	1500	100%	100%	100%	7500
5	03142100	Մեղր	կգ	20	2888	100%	100%	100%	57760
6	15831000	Շաքարավազ	կգ	30	294	100%	100%	100%	8820
7	15542100	Կաթնաշոռ	կգ	20	1790	100%	100%	100%	35800
8	15512000	Թթվասեր	կգ	45	1090	100%	100%	100%	49050
9	03142510	Չու	հատ	600	58	100%	100%	100%	34800
10	15421100	Ձեթ	լիտր	25	568	100%	100%	100%	14200
12	15111110	Միս տավարի	կգ	80	2988	100%	100%	100%	239040
13	15331161	Սոխ գլուխ	կգ	20	280	100%	100%	100%	5600
14	03221110	Գազար	կգ	20	298	100%	100%	100%	5960
16	15331139	Լոլիկ	կգ	40	1190	100%	100%	100%	47600
17	03221124	Վարունգ	կգ	30	1190	100%	100%	100%	35700
19	03221410	Կաղամբ	կգ	70	140	100%	100%	100%	9800
21	15617000	Ցորենաձավար	կգ	10	290	100%	100%	100%	2900
23	15851100	Մակարոն	կգ	15	290	100%	100%	100%	4350
26	03221120	Բիբար կանաչ	կգ	10	1350	100%	100%	100%	13500
27	15113100	Միս խոզի	կգ	60	2700	100%	100%	100%	162000
28	15112150	Միս հավի	կգ	60	1394	100%	100%	100%	83640
30	15131600	Նրբերշիկ	կգ	25	1440	100%	100%	100%	36000
31	15511200	Կաթ	լիտր	40	390	100%	100%	100%	15600
32	15623200	Սպիտակաձավար	կգ	10	324	100%	100%	100%	3240
36	15331153	Ոսպ	կգ	10	400	100%	100%	100%	4000
39	15331180	Ոլոռ կանաչ	կգ	10	870	100%	100%	100%	8700
40	15871256	Աղացած սև պղպեղ	կգ	2	4790	100%	100%	100%	9580
41	15871256	Աղացած կարմիր պղպեղ	կգ	2	2500	100%	100%	100%	5000
43	15331184	Ձիթապտուղ սև	կգ	18	1698	100%	100%	100%	30564
44	15331176	Պահածոյացված սունկ	կգ	15	1190	100%	100%	100%	17850
53	15981200	Հանքային ջուր	լիտր	50	240	100%	100%	100%	12000

54	15981500	Գազավորված զովացուցիչ ըմպելիք	Լիտր	60	215	100%	100%	100%	12900
56	15332300	Պնդուկ	Կգ	3	3900	100%	100%	100%	11700
58	03111110	Գետնանուշ	Կգ	3	1450	100%	100%	100%	4350
60	15332300	Ընկույզ կոտրած	Կգ	2	7000	100%	100%	100%	14000
62	15861100	Սուրճ	Կգ	2	2200	100%	100%	100%	4400
65	15131122	Երշիկ	Կգ	3	2400	100%	100%	100%	7200
71	03222119	Նարինջ	Կգ	25	700	100%	100%	100%	17500
74	03222118	կիտրոն	Կգ	6	1200	100%	100%	100%	7200
75	15131650	Քյուֆթա	Կգ	15	2800	100%	100%	100%	42000
		ԸՆԴԱՄԵՆԸ							**1081804**

Ծանոթություն. Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2019թ.:

ԳՆՈՐԴ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ք. Երևան,Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028
Ռեկտոր

Վ. ՈՒՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Ֆոտոն» ՍՊԸ
ք. Երևան, Ռոստոմի 58
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16044050085000
ՀՎՀՀ՝ 90036001

Տնօրեն՝

Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆ